

Ռուս-ուկրաինական պատերազմը հայաստանյան մեդիայում

խորքային հարցազրույցներ մասնագետների հետ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

Ջեդիսակ՝ Ջրանտ Գալստյան

Դեկտեմբեր, 2022

Բովանդակություն

Ներածություն և մեթոդաբանություն	2
1. Առանձնահատկությունները	3
1.1. Բնեռացվածություն. ագրեսիայից՝ հայրենական պատերազմ	3
1.2. Արտատպումներ՝ ամբողջական տեղեկատվության փոխարեն	5
1.3. Այլ դիտարկումներ	8
1.3.1. Չեզոք լուսաբանման որոնումներ	8
1.3.2. Չեզոքություն և հանրային հեռարձակում	10
2. Ազդեցությունը	11
2.1. Մեդիա սպառում և իրականության ընկալում	11
2.1.1. Լայն հասանելիություն ռուսական տեսալետի համար	12
2.2. Փոփոխություններ մեդիա տեքստերում և կարծիքներում	14
3. Լուսաբանման բարելավման առաջարկներ	15
Օգտագործված նյութեր	18
Հավելված. Հարցազրույցների մասնակիցների ցանկը	18

Ներածություն և մեթոդաբանություն

2022թ-ի փետրվարից ընթացող ռուս-ուկրաինական պատերազմի՝ հայաստանյան մեդիայի լուսաբանման առանձնահատկություններն իմանալու նպատակով հարցազրույցներ են անցկացվել մեդիայի և հարակից ոլորտների 8 մասնագետների հետ:

Չարցերը վերաբերել են պատերազմի լուսաբանման բնույթի մասին գրուցակիցների ընդհանուր դիտարկումներին, թեմային առնչվող տեղեկության ամբողջական լինելուն, հանրության տեսակետների վրա մեդիայի հնարավոր ազդեցություններին և լուսաբանման բարելավման ուղիներին:

Չնարավոր գրուցակիցների շրջանակը որոշվել է՝ հաշվի առնելով ռուս-ուկրաինական պատերազմի լուսաբանումը դիտարկած լինելը և/կամ պարբերաբար մեդիայի աշխատանքին հետևելն ու այս թեմայի վերաբերյալ դիտարկումներ ներկայացնելու կարողությունը: Այդ դիտարկումները ներկայացնել համաձայնվել են 8 մասնագետներ, որոնցից 4-ը մասնագիտացած են մեդիայի ոլորտում, մյուս 4-ը՝ քաղաքագիտության, հոգեբանության, մարդաբանության (տես հավելվածը): Մասնակիցների նման կազմը օգնել է թեման քննարկել բազմազան դիտանկյուններից և ստանալ վերլուծության հարուստ նյութ:

Խորքային հարցազրույցներն անց են կացվել 2022թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 1-ը: Դրանցից 5-ը կազմակերպվել են հեռավար հաղորդակցությամբ՝ Zoom հարթակում, 3-ը՝ դեմամդեմ, երևանում: Թեև հարցազրույցներն առաջնորդվել են նախապես որոշված թեմաների և հարցերի շրջանակով, դրանք շատ դեպքերում տարբեր ընթացքներ են ստացել՝ համաձայն գրուցակիցների փորձառության և պատասխանների բովանդակության: Չրույցները ձայնագրվել և սղագրվել են: Գրավոր տեքստը որակական վերլուծության է ենթարկվել և առանձնացվել են այն հիմնական թեմաները, որոնք քննարկվել են տարբեր հարցազրույցների ընթացքում:

Ռուս-ուկրաինական պատերազմի՝ հայաստանյան մեդիայի լուսաբանման մեզ հայտնի հետազոտությունները քիչ են և անց են կացվել պատերազմի նախնական փուլում: Այս հարցազրույցները, հետևաբար, արժեքավոր նյութ են տրամադրում թեմայի լուսաբանման զարգացումը և ներկա փուլի բնույթը հասկանալու համար:

1. Առանձնահատկությունները

Հարցազրույցների մասնակիցները միակարծիք են այն հարցում, որ հայաստանյան մեդիայի լսարանը ռուս-ուկրաինական պատերազմի մասին ամբողջական տեղեկատվություն չի ստանում: Մի շարք պատճառներ են նշվել սրա համար, որոնք նաև ուրվագծում են պատերազմի լուսաբանման առանձնահատկությունների շրջանակը:

1.1. Բևեռացվածություն. ագրեսիայից՝ հայրենական պատերազմ

Բևեռացվածությունը հիմնական հատկանիշն է, որով հարցազրույցներին մասնակցած մասնագետները բնորոշել են ռուս-ուկրաինական պատերազմի հայաստանյան լուսաբանումը: Հաճախ այն նշվել է որպես դրա հիմնական նկատելի առանձնահատկություն, չնայած որոշ մասնագետներ պարզաբանել են, որ բևեռացված լինելը նկարագրում է մեդիա դաշտն ընդհանրապես, և տվյալ հարցի լուսաբանումն ավելի լայն խնդրի արտահայտություն է:

Երկու հիմնական բևեռները ներկայացվում են որպես պրոռուսական և պրոուկրաինական/պրոարևմտյան, թեև երբեմն հիշատակվում են դրանց հակառուսական և հակաուկրաինական/հակաարևմյան ձևերը: Այս բնորոշումները օգնում են բացատրել մեդիադաշտի մի կարևոր առանձնահատկություն, թեև գրուցակիցներից մեկի համոզմամբ, բևեռներն արհեստական են, որոնց առաջացման գործում կարևոր դեր ունի մեդիան: Հարցված մասնագետները նկարագրում են այն հիմնական դիսկուրսները, որոնք շրջանառում են այս ուղղությունների ներկայացուցիչները:

Պրոռուսական հայացքներ ունեցող մեդիան հակված է խոսք տալ Կրեմլի դիրքորոշումը վերարտադրող փորձագետների, նախապատվություն տալ Ուկրաինայի վատ վիճակը, պատերազմը թեժացնելու Արևմուտքի շահագրգռվածությունը շեշտող դիսկուրսներին, արտաքին քաղաքականության համատեքստում՝ խրախուսել Ռուսաստանի հետ Հայաստանի մերձեցումը, տեղական իշխանությունների ձախողումները պայմանավորել այդ մերձեցման բացակայությամբ:

Պրոուկրաինական կամ պրոարևմտյան դիրքորոշում ունեցող մեդիան, մյուս կողմից, մեջբերում է գերազանցապես արևմտամետ փորձագետների, քննադատում է միայն Ռուսաստանին և «պաշտպանում է Ուկրաինայի դիրքորոշումը՝ առանց հարցականների», պատերազմում Ռուսաստանի թուլացումը համարում է ձեռնտու Հայաստանին և խրախուսում է Ռուսաստանի հետ հարաբերությունների վերանայումը՝ հօգուտ Արևմուտքի:

Կարևոր է նաև լեզվի ընտրության հարցը: Այս կամ այն բևեռը ներկայացնելը որոշելի է ըստ նրա, թե այս և նմանատիպ բառազույգերի որ տարբերակներն են գործածվում՝ պատերազմ-հատուկ գործողություն, կամավորներ-վարձկաններ, ագրեսիա-հայրենական պատերազմ, հարձակում-կանխում, օկուպացիա-ազատագրում, ռազմական հանցագործություն-բեմադրում:

Ըստ հարցվածներից շատերի՝ սա ռուս-ուկրաինական պատերազմի լուսաբանումը պայմանավորող ամենաակնառու գործոններից մեկն է: Այս հարցում տարբեր է երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանի դիտարկումը, որը, մեկնաբանելով իրադարձությունների սկզբնական փուլի մշտադիտարկման արդունքները, նշում է, որ ակնհայտ պրոռուսական կամ պրոուկրաինական լրատվամիջոցները «փոքր սեգմենտ» են, իսկ ուսումնասիրված ՉԼՄ-ների մեծ մասը փորձել են հավասարակշռված ներկայացնել դեպքերը:

Ինչպես նշվեց, որպես կանոն՝ անակնկալներ չկան այն հարցում, թե որ փորձագետներին են հրավիրում հարցազրույցի այս լրատվամիջոցներում: Խոսքը ոչ միայն ուղղակիորեն ուկրաինական ճգնաժամին վերաբերող հարցազրույցների մասին է, այլև հայաստանյան թեմաների վերաբերող հարցազրույցների, որտեղ անդրադարձ է լինում Ուկրաինայում պատերազմի հետ առնչություններին:

«Շատ հաճախ, լրատվամիջոցը իր դիրքորոշումը չի հայտնում, բայց հրավիրում է այնպիսի փորձագետների, և շատ հաճախ միայն այնպիսի փորձագետների, որոնք ինչ-որ մի կոնկրետ գիծ են տանում: [...] Եվ սա կանոն է», - ասում է քաղաքագետ, հետազոտող Էդգար Վարդանյանը:

Ձրուցակիցներից մի քանիսը որոշ բացառություններ նկատել են, թեև բավականին քիչ: Նրանց կարծիքով, հակառակ կարծիք ներառելու այդ քաղաքականության նպատակը սովորաբար օբյեկտիվության տպավորություն ստեղծելն է, նաև՝ զրուցակցի տեսակետը «ջախջախելը»: Մյուս կողմից, նշվում է, որ գուցե ոչ թե լրատվամիջոցները չեն փորձել հրավիրել տարբերվող կարծիք ունեցող զրուցակիցների, այլ վերջիններս են հրաժարվել գնալ՝ հաշվի առնելով նշված ռիսկը:

Օրբելի վերլուծական-հետազոտական կենտրոնի փորձագետ Արտակ Խաչատրյանի դիտարկմամբ, որևէ բևեռի շուրջ կողմնորոշումը ոչ միայն մշակվում է տարիների ընթացքում, հստակ խմբագրական քաղաքականության, այդ թվում՝ որոշակի փորձագետների հրավիրելու (և մյուսներին չհրավիրելու) միջոցով, այլև սահմանվում է հիմնադրման պահից ամեն ստեղծվող լրատվամիջոցի հետ:

«Ներկայանում են որպես լրատվամիջոց, մեկ-երկու շաբաթվա մոնիթորինգը արդեն ցույց է տալիս, որ իրենց մոտ տարվող հստակ քաղաքական գիծ կա: Ես խոսում եմ հիմնական, երևացող դերակատարների մասին, որոնք մի քանի տասնյակ հազար լսարան ունեն և որոնք կարող են կարծիք ձևավորողների դեր ունենալ իրենց թիրախային լսարանների համար: Նման լրատվամիջոցների համար հստակ դիրքավորվելը ասես առաջին քայլերից մեկը լինի», - ասում է նա:

Այս բաժանումները գուցե միայն հայաստանյան երևույթ չեն, բայց զրուցակիցները նշում են, որ Հայաստանում բևեռացվածությունը «շատ սուր է»:

«Շատ բացահայտ պրոռուսական և բացահայտ հակառուսական թևեր կան, Ուկրաինայի հանդեպ էլ մի մասի մոտ կա շատ հստակ մոտեցում որպես հակահայկական կողմի, իսկ մյուս մասը ընկալում է որպես դեմոկրատական ուժերի ֆորպոստ: Ծայրահեղացումն էստեղ շատ է: Ես համոզված եմ, որ բոլոր

երկրներում դա կա, բայց մեզ մոտ, ելնելով մեր արտաքին քաղաքականության մեջ այս ֆակտորների շատ ուժեղ ներգրավվածությունից, [բևեռացվածությունը] միջինից շատ է»,- կարծում է մեդիա փորձագետ Սամվել Մարտիրոսյանը:

Այս ծայրահեղացումը, գրուցակիցների կարծիքով, խոչընդոտում է թեմայի մասին համարժեք պատկերացում կազմելուն: Արտակ խաչատրյանի կարծիքով, այն ընթերցողին դարձնում է մի կամ մյուս կողմի համակիր, ձևավորում է անհիմն սպասումներ մի բևեռից և չափազանցված բացասական էմոցիաներ՝ մյուսի նկատմամբ:

«Լրատվամիջոցների ճնշող մեծամասնությունը ոչ թե նպաստում է մեզ համար կարևոր դիսկուրսների զարգացմանը, խթանմանը, բանավեճերի խորացմանը, վերլուծությունների արդյունավետությանը, այլ կատարում է իրենց հովանավորների պատվերը»,- հավելում է Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը:

Ուշագրավ է այն, որ բևեռացվածության համատեքստում հարցազրույցների մասնակիցները կարևորել են ոչ միայն մեդիայի՝ «քաղաքական ճամբարին հարելու», «քաղաքական հովանավորներ ունենալու» և «քաղաքական շահեր սպասարկելու» գործոնները, այլև «խմբագրության աշխարհաքաղաքական հայացքները», «մեդիա աշխարհի ներկայացուցիչների համակրանքը» որևէ պետության նկատմամբ, այդ թվում՝ արտաքին քաղաքական այլ հարցեր լուսաբանելիս: Այսինքն, որքան էլ բևեռացվածությունը նշվել է որպես հիմնական խնդիրներից մեկը ընդհանրապես հայաստանյան մեդիայում և մասնավորապես այս թեմայի լուսաբանման մեջ, դա բացատրվել է ոչ միայն քաղաքական շահերի արձագանքելով, որտեղ մեդիան սպասարկող է, այլև խմբագրական համակրանքի գործոնով, որտեղ մեդիայի ներկայացուցիչները ակտիվ որոշումներ կայացնողներ են:

1.2. Արտատպումներ՝ ամբողջական տեղեկատվության փոխարեն

Խոսելով տեղեկատվության ամբողջականության մասին՝ մասնագետների մի մասը կարծում են, որ այս պատերազմի մասին լիարժեք տեղեկություն չկա՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ այլուր: Լրագրողները և փորձագետները, նույնիսկ պատերազմին ներգրավված երկրների բնակիչները լիարժեքորեն տեղեկացված չեն կատարվողի մասին: Աշոտ Մելիքյանը նշում է, որ ստույգ են տեղեկությունները միայն պատերազմի մեկնարկի և ավարտի մասին, իսկ դրա ընթացքին վերաբերող տեղեկությունը «ինֆորմացիոն պատերազմի մեջ կորչում է»: «Կարծում եմ, որ իրավիճակին ամբողջովին չի տիրապետում ոչ ոք [...], բայց ընդհանուր պատկերացումներ կողմերի դիրքորոշումների, մտադրությունների, համաձայնությունների վերաբերյալ [հանրությունը ստանում է]»: Չրուցակիցների կարծիքով՝ պատերազմող երկու կողմերն էլ տարածում են մեծ ծավալով ապատեղեկատվություն, այնպես որ պետք է ավելի շատ խոսել ոչ թե տեղեկատվության, այլ քարոզչության մասին: Այս հանգամանքին նպաստում է այն, որ փաստերը ստուգում են շատ քիչ թվով հայաստանյան

լրատվամիջոցներ, և արտասահմանյան մեդիայի՝ սխալ տեղեկություններով շատ նյութեր նույնությամբ վերահրապարակվում են:

Հարցված մասնագետների՝ այս թեմայի լուսաբանման հիմնական քննադատություններից մեկը հենց վերահրապարակումներին է վերաբերում: Հայաստանյան մեդիայի ձեռագրի մասին խոսելիս նրանք գործածում են «արտատպված», «վերատպված», «վերաշարադրված» բառերը՝ ընդգծելու համար իրողություններն ու կողմերի դիրքորոշումները ներկայացնելու մեխանիզմական աշխատանքը՝ մեկնաբանության, վերլուծության, ստուգման և վիճարկման փոխարեն: Բորիս Նավասարդյանը նշում է, որ Երևանի մամուլի ակումբի մշտադիտարկման (փետրվար-մայիս) բացահայտումներից մեկը հենց նման «բալանսավորման տարօրինակ դրսևորումն» է եղել, երբ միևնույն լրատվամիջոցում, երբեմն՝ կողք-կողքի, հրապարակվել են կողմերի հակադիր տեսակետներն ու «արմատապես տարբերվող բառապաշարով» հայտարարությունները՝ առանց մեկնաբանությունների: մշտադիտարկման հեղինակները նման գործելաոճը պայմանավորել են այս հարցում խմբագրական քաղաքականության՝ լուսաբանման հետևողական կանոնների բացակայությամբ:

«Երբ չկան այդ կանոնները և չեն մշակվում ստացված տեղեկությունները, նույնիսկ հավասարակշիռ լինելու ցանկության դեպքում արդյունքը այլ է: [...] Օգտվելով օտարերկրյա, առաջին հերթին՝ ռուսական և ուկրաինական աղբյուրներից, մեր լրագրողները [պետք է] հաշվի առնեին, որ այդտեղ կարող է լինել և կողմնակալություն: Այդ կողմնակալությունը հայտնաբերելու և վերացնելու նպատակով աղբյուրից եկած նյութը որոշակի մշակման պետք է ենթարկվեր, բայց շատ քչերն էին դա անում», - նշում է Բորիս Նավասարդյանը:

Նման լուսաբանումը, ԵՄԱ նախագահի խոսքով, լսարանին չի կողմնորոշում.
«Բավականին շփոթեցնող և հակասական լուսաբանում էր, որը չէր օգնում մարդկանց հասկանալ՝ ինչ է կատարվում իրականում»:

Խոսելով պատճառների մասին՝ գրուցակիցներից ոմանք նկատում են, որ պարզ թարգմանություն անելը ավելի քիչ աշխատանք է պահանջում, քան տարբեր աղբյուրներ համադրելն ու վերլուծություններ անելը. այն հեշտ է, նաև՝ անվտանգ: Մասնագիտական հմտություններից բացի, նրանք մատնանշում են ռեսուրսների բացակայությունը, ինչի պատճառով տեղական լրատվամիջոցները չեն կարողանում չմիջնորդավորված ձևով լրատվություն հաղորդել այնպիսի միջազգային թեմաների մասին, ինչպիսին Ուկրաինայում պատերազմն է:

Մեդիայի ներկայացուցիչների շրջանում ԵՄԱ-ի անցկացրած մեկ այլ հետազոտության համաձայն (YPC, 2022), Ուկրաինա այցելելու ֆինանսական դժվարությունը թեմայի վերաբերյալ առաջնային տեղեկություններ ստանալու հիմնական խոչընդոտներից է: Բորիս Նավասարդյանի նշում է, որ սա այն օբյեկտիվ պատճառն է, թե ինչու այս հարցում օպերատիվ և ամբողջական տեղեկություններ ստանալու համար չի կարելի հենվել միայն հայաստանյան մեդիայի վրա: Բացի այդ, այժմ Ուկրաինա կարելի է հասնել հիմնականում եվրոպական երկրներով, և շենգենյան վիզա ձեռք բերելը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում:

Էդգար Վարդանյանի կարծիքով, տեղում աշխատող թղթակից չունենալու պատճառով լրատվական նյութերում պակասում է կարևոր մի բաղադրիչ՝ խմբագրության սեփական դիտարկումը: Եթե դարաբաղյան պատերազմի ժամանակ շատերը արտասահմանյան մեդիայից պահանջում էին լինել տեղում և չհիմնվել միայն պաշտոնական տեղեկությունների վրա, կարելի է ակնկալել, որ այժմ նման պահանջ ունեն ուկրաինացիները:

Պետք է նշել, սակայն, որ դեպքի վայրում գտնվելը ոչ բոլոր հարցազրույցներում է նշվել որպես սեփական դիտարկումն ունենալու միջոց: Եթե ռեսուրսները և աշխարհագրական դիրքը հայաստանցի լրագրողներին թույլ չեն տալիս ներկայացնել սեփական դիտարկումները, գրուցակիցների մի մասը այլ որակներ են փնտրում միջազգային թեմաների լուսաբանումներում: Քաղաքագետ Միքայել Չոլյանը այն գրուցակիցներից է, որոնք այս թեմային հետևում են միջազգային մեդիայի միջոցով, քանի որ հայաստանյան մեդիան առանձնահատուկ ոչինչ չի առաջարկում: Հասկանալի համարելով ռեսուրսների սակավության հանգամանքը՝ նա կարևորում է «սեփական հայացքի» առկայությունը.

«Եթե հայկական լրատվամիջոցների մեջ լինեի ինչ-որ առանձնահատկություն, որ հենց հայկական տեսակետից են Էդ ամեն ինչը դիտարկում, վերլուծում, երևի հայկականը կնայեի, բայց քանի որ մինևույն է՝ մեծամասամբ ուղղակի թարգմանում են, ավելի լավ է սկզբնաղբյուրը նայել», - ասում է նա:

Միակ բացառությունը, որ գրուցակիցը նկատել է, տեղական մեդիայի ռուսերեն հարցազրույցներն են այնպիսի փորձագետների հետ, որոնք կարող են ներկայացնել «լայն պատկերը»՝ պատերազմող կողմերի հանդեպ դիրքավորման «նեղ» քննարկումից այն կողմ, և միաժամանակ առաջարկում են այնպիսի տեսանկյուն, որը կարող է հետաքրքրել նաև ռուսական և ուկրաինական լսարաններին¹:

Մեդիա փորձագետ Աննա Փամբուխչյանը, որը նույնպես նախընտրում է նմանատիպ հարցերում սկզբնաղբյուրին՝ միջազգային մեդիային հետևելը, լուսաբանման այս պակասությունների ավելի լայն համատեքստ է ներկայացնում.

«Էնքան խնդիրներ կան, որ մեղադրելու էլ չէ, որ ստրատեգիա չկա Ես հարցում, որովհետև Էն պրոբլեմները, որոնց պարբերաբար հայկական լրատվամիջոցները բախվել են վերջին տարիներին, սկսած՝ համավարակի ժամանակ ֆինանսական խնդիրներից, Ուկրաինայի պատճառով դոնոր ֆինանսավորման վերաուղղորդումից, ներքաղաքական իրադարձություններ, Էսկալացիաներ, Էնքան շատ են, որ ինչ-որ տեղ Ուկրաինայի պատերազմի լուսաբանումը մեկ-մեկ մնում է լուսանցքում՝ օբյեկտիվ պատճառներից ելնելով: Այնպես չէ, որ Էներգիա, մարդկային ռեսուրս ու փող ունեն և հատուկ չեն անում»:

¹ Միքայել Չոլյանի ներկայացրած օրինակը սոցիոլոգ Գեորգի Դերլուգյանի հարցազրույցներն են հայկական մեդիայում

1.3. Այլ դիտարկումներ

Մի կողմից՝ բևեռացվածությունն ու միանշանակորեն մեկ կողմին սատարելը, մյուս կողմից՝ չկողմնորոշող պարզ արտատպումները լսարանին առաջարկում են ռուս-ուկրաինական հակամարտության վերաբերյալ թերի գիտելիք:

«Շատ աղճատված է ինֆորմացիոն դաշտը թե՛ Չայաստանում, թե՛ դրսում. շատ դժվար է հասկանալ, թե իրականում ինչ է տեղի ունենում, եթե անգամ ամեն օր լուրերին հետևում ես», - ասում է Աննա Փամբուխչյանը:

Չարցված մասնագետները նկատել են, որ Չայաստանում արտաքին քաղաքական հարցերի մասին վերլուծական հոդվածներ և սյունյակներ գրելու ավանդույթ չկա: Ռուս-ուկրաինական պատերազմի առանձնահատկությունների մասին խոսելիս՝ նրանք նշել են նաև հարցի պարզունակ, ծայրահեղացված ներկայացումները, օրինակ՝ կողմերի հանդեպ չափազանց դրական կամ խիստ բացասական մոտեցում ունենալը, համակրանքի կամ հակակրանքի դիրքից նայելը՝ ըստ նրա, թե լրատվամիջոցի կարծիքով՝ որ կողմն է ճիշտ, որը՝ սխալ: Երբեմն հարցը ներկայացվում է ժողովրդավարության և բռնապետության պայքարի համատեքստում, Ուկրաինան նմանեցվում է Չայաստանին ժողովրդավարության ընդհանրությամբ կամ տեղավորվում հակադիր բևեռում՝ որպես Ադրբեջանի դաշնակից, Արևմուտքը քննադատվում է «երկակի ստանդարտների» համար: Չոգեբան, հետազոտող Սոնա Մանուսյանի դիտարկմամբ, նման համեմատություններում դրսևորվում են մեր քաղաքական ինքնության մասին պատկերացումները: Զրուցակիցների կարծիքով, այսպես իրավիճակը գնահատվում է Եմոցիոնալ, էթնոցենտրիկ, միաչափ ու պրիմիտիվ ձևով՝ հաշվի չառնելով տարբեր դեպքերի առանձնահատկությունները և հարաբերությունների քաղաքական բնույթը:

Մեկ կամ մյուս բևեռի մեդիայից բացի մարդիկ պետք է ունենան «միջակայքը տեսնել կարողացող», քաղաքական շահերի չծառայող, «հնարավորինս չեզոք, որակյալ և հիմնավորված» լրատվություն և վերլուծություն ներկայացնող մեդիա հարթակների ընտրանքի հնարավորություն, բայց Չայաստանում «երրորդի այլընտրանքը [...] խիստ սահմանափակ է»:

1.3.1. Չեզոք լուսաբանման որոնումներ

Բևեռացման քննարկումներում ոչ մեծ տեղ է զբաղեցրել անկախ, չեզոք կամ որակյալ բնութագրվող մեդիայի դերը: Պատճառը թերևս հենց այն է, որ քիչ են նմանատիպ տեղեկատվամիջոցները, որոնք փորձում են պրոֆեսիոնալ լրագրության կանոններով առաջնորդվել, համադրել տեղեկությունները, «չլինել որևէ ճամբարի ներկայացուցիչ ինֆորմացիոն պատերազմում»: Չարցված մասնագետների կարծիքով՝ մեծ չէ նաև նրանց լսարանը:

«Նրանք ամեն դեպքում հարգված լրատվամիջոցներ են, բայց լսարանի քանակով չենք կարող համեմատել բևեռացված [մեդիայի] լսարանի հետ: Այդուհանդերձ, ի՞նչն է կարևոր, որ այդ որակյալ լրատվամիջոցներից օգտվում են լսարանի

առավել գրագետ մասը, «կարծիքների լիդերները», որոնք ազդեցություն են ունենում այլ մարդկանց կարծիքների վրա, և հենց սրանով է բարձրանում որակյալ լրատվությամբ զբաղվող լրատվամիջոցների դերը»,- ասում է Աշոտ Մելիքյանը:

Մեդիայի չեզոքության հարցը քննարկվել է շնորհիվ այն բանի, որ փաստերի և ճշմարտության շուրջ դատողությունները հարցազրույցների ընթացքի կարևոր բաղադրիչներ են դարձել: Այստեղ գրուցակիցների տեսակետները տարամիտվում են. թեև մեծ մասի համար չեզոքությունը որևէ կողմ չբռնելն է և տեսակետների համաչափ ներկայացումը, մյուս՝ ավելի փոքր մասը կարծում են, որ չեզոքությունը խնդրային է այնպիսի մի հարցի դեպքում, որն ինքնին կողմերի միջև հավասարություն չի ենթադրում: Եթե որոշ գրուցակիցների համար իրողությունների պաշտոնական մեկնաբանությունները համաչափորեն ներկայացնելը չեզոքության կարևոր ցուցանիշ է, որին պետք է ձգտել, այլոց համար դա «իրադարձությունների պարզունակ նկարագրողական վերաշարադրում» է, «թունավոր նեյտրալություն», որոշ դեպքերում՝ նույնիսկ իրականության խեղաթուրում, ինչպես, օրինակ, պատերազմը որպես հատուկ օպերացիա ներկայացնելը: Մի դեպքում ակնհայտ ճշմարտություն է այն, որ «կա ագրեսոր և կա պետություն, որի տարածքում արյունալի պատերազմ է մղվում՝ բազմաթիվ մարդկային զոհերով»:

«Օբյեկտիվորեն հարց է առաջանում, թե արդյոք պիտի ցանկացած լրատվամիջոց նաև ներկայացնի ռուսական տեսակետը կոնկրետ այս հարցում, որովհետև սա արդեն իսկ շատ անհավասարաչափ հարց է»,- ասում է Աննա Փամբուխչյանը:

Մյուս դեպքում ճշմարտությունը մշտական կառուցման ընթացքի մեջ է, կան անապացուցելի հանգամանքներ, պրոպագանդա՝ բոլոր կողմերից, իսկ Ռուսաստանի և Ուկրաինայի/Արևմուտքի դերերը, կամ առնվազն դրանց ներկայացման ձևերը, այդքան միանշանակ չեն:

«Դեռ պարզ չէ ճշմարտությունը: Ցավոք սրտի, ով հաղթի, նա էլ ճշմարիտ է: Նաև արժեքների հարցն է [...] ճշմարտությունն ինձ համար միայն տեխնիկական, ապացուցելի ինֆորմացիայի համախումբը չէ, ճշմարտությունը որոշակի արժեքային, համոզմունքային դիրքում մնալու հնարավորությունն է: Դա նույնպես հնարավոր չէ այս պահին, որովհետև շատ բան է խախտված. ինչ-որ բան հայտարարողը նաև հակառակը անողն է, ու դա մի կողմից չէ»,- ասում է Սոնա Մանուսյանը:

1.3.2. Չեզոքություն և հանրային հեռարձակում

Հարցազրույցներում նկատելի տեղ են զբաղեցրել Հանրային հեռուստատեսության վերաբերյալ քննարկումները: Սրա համար հիմնականում առիթ է հանդիսացել հենց չեզոքության թեման և գրուցակիցների այն նկատառումը, որ հանրային հեռարձակողը ակնհայտորեն ավելի մեծ եթերաժամանակ է տրամադրել հակամարտության ռուսական կողմի ներկայացուցիչներին: Այս պնդումը հենվում է ինչպես հարցազրույցների որոշ

մասնակիցների անձնական դիտարկումների, այլնպես էլ 2022թ. գարնանը անցկացված երկու մշտադիտարկումների արդյունքների վրա:

Փետրվար-մայիս ամիսներին Երևանի մամուլի ակումբի մշտադիտարկած 6 լրատվամիջոցների մեջ Հանրային հեռարձակողն ուկրաինական իրադարձությունները լուսաբանելիս օգտագործել է ժանրերի ամենամեծ բազմազանությունը (լրատվություն, հարցազրույցներ, բանավեճեր): Մյուս կողմից, հեռուստաընկերությունը միակն է, որտեղ անհավասարաչափ են ներկայացված եղել «ռուսական և ուկրաինական տեղեկատվական օրակարգերը» (ԵՄԱ, 2022: 5-6):

Հավասարակշռության սկզբունքից շեղման արտահայտություններից մեկը եղել է «պատերազմ» բառից հիմնականում խուսափելն ու ռուսական իշխանությունների հեղինակած «հատուկ գործողություն» արտահայտությունը գործածելը, մյուսը՝ հարցազրույցներին հիմնականում ռուս պաշտոնյաների հրավիրելը՝ ուկրաինական ներկայացուցիչների դիրքորոշումը ներկայացնելով անուղղակիորեն՝ այլ աղբյուրների միջոցով (չնայած այն հանգամանքին, որ այլ լրատվամիջոցներ խոսք էին տալիս այդ երկրի՝ Հայաստանում գտնվող ներկայացուցիչների): «Ակնհայտ էր, գոնե այն ժամանակաշրջանում, երբ մենք իրականացնում էինք մշտադիտարկում, որ դա մտածված և կանոնակարգված մոտեցման արդյունք էր», - կարծում է ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանը:

Հանրայինի լուսաբանումը, ի թիվս 9 այլ լրատվամիջոցների, մշտադիտարկել է նաև «Ռեզիոն» հետազոտական կենտրոնը՝ ապրիլ-մայիս ամիսներին: Մշտադիտարկումը պարզել է, որ Հանրային հեռուստաընկերության՝ ուսումնասիրված հարցազրույցներին Ուկրաինայի որևէ ներկայացուցիչ չի մասնակցել, իսկ Ռուսաստանից մասնակցել է 1 ներկայացուցիչ (ռեպորտաժներում նրանք մեջբերվել են համապատասխանաբար 35 և 57 անգամ) (Ռեզիոն, 2022: 24,25):

Պարզ չէ, թե արդյոք այս միտումը շարունակվում է, քանի որ նոր հետազոտություններ չեն արվել: Սակայն հարցազրույցների այլ մասնակիցներ տարբերվող դիտարկումներ ունեն: Նրանք մեջբերում են Հանրայինին արևմտամետոլոգյան համար մեղադրող կարծիքներ, կամ նշում են, որ ռուս պաշտոնյաներին խոսքի ավելի շատ հնարավորություններ տալը անհրաժեշտաբար չի նշանակում քարոզել կրեմլյան դիսկուրսը, քանի որ, ինչպես նշվեց վերևում, նրանց կարող են հրավիրել՝ տեսակետը վիճարկելու նպատակով:

«Փաստ չէ, որ հարցազրույցի ֆորմատով ավելի շատ ժամանակ տրամադրելով ռուսական փորձագետներին կամ Ռուսաստանի ներկայացուցիչներին՝ Հանրային հեռուստաընկերությունը պրոռուսական նարատիվներին է աջակցում, կարելի է նույնիսկ ասել, որ չի բացառվում, որ իրականում կարող է և հակառակը լինել», - ասում է Էդգար Վարդանյանը:

Այդուհանդերձ, մասնագետների մի մասը ընդունելի է համարում Հանրայինի գործունեության ներդաշնակեցումը պետական քաղաքականությանը: Այլ կերպ ասած, եթե իշխանությունները որոշել են լինել չեզոք, բայց նաև սերտ պահել հարաբերությունները Ռուսաստանի հետ, հանրային հեռարձակողը փորձում է լրատվական հաղորդումներում պահել չեզոքությունը, բայցև տաղավարային խոսքի

ավելի շատ ժամանակ տալ ռուս խոսնակներին, եթե հակառակը կդիտվի որպես հակառուսականություն: Այս տեսակետի համար, որը հանրային հեռարձակողի գործունեությունը դիտում է որպես «պետական տեղեկատվական քաղաքականության» մաս, հանրային մեդիան կարևոր քաղաքական հարթակ է:

2. Ազդեցությունը

2.1. Մեդիա սպառում և իրականության ընկալում

Հայաստանում հեռուստատեսությունը շարունակում է տեղեկության հիմնական աղբյուրներից մեկը լինել շատերի համար: Հատկապես Ուկրաինայում պատերազմի համատեքստում կարևոր է նաև Հայաստանում ռուսական հեռուստատեսության հեռարձակման հանգամանքը: Այս թեմայի հիմնական աղբյուրներին ավելացել են սոցցանցերը, ինչպես Յություբ և Տելեգրամ հարթակները: Մյուս կողմից, լսարանը բազմազան է. կան և՛ տարբեր քաղաքական բևեռների ու դրանց մեդիայի հետևորդներ, և՛ մարդիկ, որոնք կարդում և համադրում են տարբեր աղբյուրներից ստացած տեղեկություններ:

Ուրեմն, դժվար է մեդիայի սպառման և կոնկրետ խնդրի վերաբերյալ մարդկանց տրամադրությունների կապի մասին դատողություններ անելը: Այդուհանդերձ, հասարակական կարծիք(ներ)ի և մեդիայի մասին գրուցակիցների դիտարկումները մի քանի ուշագրավ թեմաներ են ամառարկել, որոնք կներկայացնենք այս բաժնում:

Դժվարություններից մեկն այն է, որ չնայած ամանձին լրատվամիջոցների սպառման մասին տարբեր սոցիոլոգիական տվյալների ամօրյությանը, մարդիկ հաճախ չեն հիշում իրենց սպառած լրատվության աղբյուրների անունները, նաև որովհետև դրանք ոչ բոլոր հարցերում ունեն հստակ գաղափարախոսություն և կարող են ավելի շատ շփոթեցնել լսարանին, «հիմնականում մարդիկ ասում են՝ ոչ մեկին էլ չեմ հավատում, [...] տարբեր բաներ նայում եմ, փորձում եմ գլուխ հանել»:

«Մեդիայի ազդեցությունն անշուշտ կա, բայց ես վերջերս հակվել եմ նրան, որ մեդիան արդեն այնքան է հակասող, որ մարդիկ ավելի շատ ի հեճուկս մեդիայի են ինչ-որ բաներ իմանում: [...] Մեդիաների խժոժոցի մեջ (մի կողմից՝ ռուսական ագրեսիվը, մյուս կողմից՝ արևմտյան) մարդիկ ինչ-որ խճանկար են փորձում հավաքել», - ասում է Սոնա Մանուսյանը:

Բացի այդ, գրուցակիցներից մի քանիսը նշում են մարդկանց՝ սեփական գիտելիքն ու տեսանկյունը վերահաստատելու հակման կարևորությունը: Միքայել Չոլյանի և Սոնա Մանուսյանի հետևյալ դիտարկումներն ամառարկում են մի կողմից՝ մեդիայի և քարոզչության, մյուս կողմից՝ դրանց ընկալման միջև անուղղագիծ հարաբերություն.

«Իհարկե, միշտ կապը կարելի է տեսնել, բայց ուրիշ հարց է՝ որն է ամառնայինը. այդ մեդիան է նախընտրում, որովհետև այդպիսի տեսակետ ունի, թե՞ այդպիսի տեսակետ ունի, որովհետև այդ մեդիան է նախընտրում: Կախարդական շրջան է

ստեղծվում, և շատ դժվար է տեսակետը փոխել, որովհետև եթե սկսում ես այդ մեղիան նայել, արդեն երկու զուգահեռ իրականությունն է»։ (Միքայել Չոլյան)

«Մարդը մեծ ջանք կարող է թափել, որ ընտրողաբար տեսնի էն, ինչը պիտի տեսնի։ Այսինքն, սա մենակ պրոպագանդան չէ։ Պրոպագանդան ինչքան էլ [ուժեղ] լինի, դու մյուս պրոպագանդան էլ կարող ես իմանալ, բայց դու եթե ինչ-որ կողմ ես բռնել, կարող է երբեք չիմանաս էլ՝ էն մյուս կողմը ինչեր է ցույց տալիս, որովհետև ընտրողականությունն ունես, կարիք ունես նայելու նա և չնայելու նա»։ (Սոնա Մանուսյան)

Սա, սակայն, չի նշանակում, որ մեղիայի բովանդակությունը ազդեցություն չունի լսարանի վրա։ Ինչպես նշվեց, նախորդ բաժնում ներկայացված առանձնահատկությունները՝ բնեռացվածությունը, արտատպությունները, էմոցիոնալ լուսաբանումը, ընթերցողներին չեն օգնում համակողմանի տեղեկություն ստանալ իրադարձությունների վերաբերյալ։ Փոխարենը, դրանք կարող են նպաստել այս կամ այն բնեռի համակիր դառնալուն, չափազանցված դրական կամ բացասական պատկերացումներ ունենալուն, այլընտրանքային տեղեկությունները մերժելուն։

2.1.1. Լայն հասանելիություն ռուսական տեսակետի համար

Մի շարք գործոններ հարցազրույցների մասնակիցներից շատերին թույլ է տալիս պնդել, որ հայաստանյան մեղիայում Ռուսաստանի պաշտոնական տեսակետը առավելություն ունի։ Մասնավորապես, նրանք նշում են ռուսական տեսակետին ավելի շատ եթեր տալու Ջանրային հեռուստաընկերության՝ վերը նշված քաղաքականությունը, ակնհայտ ռուսամետ տեղեկատվամիջոցների առատությունը, իսկ որ ավելի կարևոր է՝ ռուսերենի տարածվածությունը և ռուսական հեռուստաալիքների վերգետնյա հեռարձակումը։

Ռուսերենի դերը կարևորվում է և՛ աղբյուրներից օգտվելիս տեղական մեղիայի նախընտրությունների, և՛ ինքնուրույն տեղեկություն որոնելիս մարդկանց հնարավորությունների համատեքստում։ Զրուցակիցների դիտարկմամբ, հայաստանյան մեղիայի լրագրողները ավելի շատ սովոր են աշխատել ռուսաստանյան աղբյուրների հետ, ռուսերեն իմացող լրագրողներն ավելի շատ են։ Ավելին, նրանք, ինչպես հանրության մեծամասնությունը, դաստիարակվում են այն մեղիա միջավայրում, որտեղ արտաքին աշխարհի մասին տեսակետները հիմնականում վերցված են ռուսալեզու մեղիայից։ Մինչդեռ հատկապես ռուս-ուկրաինական հակամարտությունը «այն դեպքը չէ, որ ռուսական պրիզմայով կարելի է նայել իրավիճակին»։

Պատճառներից մեկը, ըստ Աննա Փամբուխչյանի, դրամաշնորհատու կազմակերպությունների ուշադրությունն է ներքին խնդիրներին, ինչի պատճառով սովորաբար ռեսուրսներ չեն նախատեսվում միջազգային լրատվությունը թարգմանելու և վերլուծելու համար։

Ռուսերենը տարածված է նաև մեղիա սպառողների շրջանում.

«Եթե նույնիսկ մարդը ինքնուրույն փորձի տեղեկություն գտնել, պետք է շատ լավ հասկանանք, որ օտար լեզուներից հիմնականում միայն ռուսերենն է, որ ընկալելի է Հայաստանի հասարակության մեծամասնության համար: Անգլերեն մամուլ մարդիկ չեն կարդում, իսկ եթե կարդում էլ են, ապա՝ թարգմանությունը, ու շատ հաճախ էդ թարգմանությունը հասնում է ռուսական մամուլի մեջբերումներով»,- ասում է Սամվել Մարտիրոսյանը:

Մյուս կողմից, ոչ բոլոր զրուցակիցներն են համաձայն, որ ռուսերենը ամրապնդում է ռուսաստանյան տեսակետը: Նրանք մատնանշում են ռուսալեզու ուկրաինական, ինչպես նաև ռուսական ընդդիմադիր մեդիայի գոյությունը՝ որպես հակակշիռ: Ռուսերենով տեղեկություններ տարածելու կարևորությունը գիտակցում են նաև Ուկրաինայում և, ԵՄԱ-ի մշտադիտարկման համաձայն, հայաստանյան մեդիան օգտվում է այդ հանգամանքից երկու տեսակետները ներկայացնելու համար:

Եթե ռուսերենի տարածվածությունն ինքնին չի նշանակում, որ ռուսական դիսկուրսը շահեկան դիրքում է, ապա Հայաստանում ռուսաստանյան հեռուստաալիքների վերգետնյա հեռարձակումը հեռուստադիտողներին առնվազն հասանելի է դարձնում Ռուսաստանի պետական տեսակետը այնպես, ինչպես ոչ մի այլ պետության, այդ թվում՝ Ուկրաինայի: Այս հանգամանքն ընդգծել են նաև ԵՄԱ-ի հետազոտողները.

«Հաշվի առնելով այն փաստը, որ ռուսական երեք հեռուստաալիք հայկական հեռուստաալիքների հետ միասին հեռարձակվում են հանրային մուլտիպլեքսում (այլ երկրների լրատվամիջոցներ այնտեղ չկան), այն լսարանի վրա ազդելու առավելությունը, որը տեղեկատվություն է ստանում հիմնականում վերգետնյա հեռարձակման միջոցով, անկասկած պատկանում էր Ռուսաստանին» (ԵՄԱ, 2022: 6):

ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանի կարծիքով, սա է պատճառը, որ չնայած, իր դիտարկմամբ, Ուկրաինայի նկատմամբ մեդիայի ներկայացուցիչների համակրանքին և հայաստանյան մեդիայի «ուկրաինամետ լուսաբանմանը», հասարակության շրջանում պատերազմի պատասխանատվությունը հիմնականում վերագրում են Արևմուտքին և Ուկրաինային (ՄՅԻ, 2022: 42):

Հարցված մասնագետները հավելում են, որ այս հեռուստաալիքների բովանդակության սպառող կարող են լինել հատկապես այլընտրանքային տեղեկության աղբյուրների հասանելիություն չունեցող, որոշակի տարիք և կրթություն ունեցող մարդիկ:

2.2. Փոփոխություններ մեդիա տեքստերում և կարծիքներում

Չնայած մեդիայում ռուսական դիրքորոշման հավանական առավելությանը, հարցազրույցների գրեթե բոլոր մասնակիցները նկատում են, որ այն Հայաստանում ավելի ու ավելի մարգինալ է դառնում, և փոփոխություններ են դիտվում մեդիայի աշխատանքում և մարդկանց կողմնորոշումներում: Պատճառը նախևառաջ համարում են քաղաքական զարգացումները, ոչ թե այլընտրանքային տեղեկատվամիջոցների ազդեցությունը:

«Վերաբերմունքը կամաց-կամաց, բայց ստաբիլ ձևով փոխվում է [...] Անկախ նրանից, թե ինչքան փող ունեն պրոռուսական, հայերեն բովանդակություն արտադրողները և ինչքան ենք մենք նայում ռուսական հեռուստատեսություն, իրականությունը անհնար է թաքցնել մարդկանցից»,- ասում է Աննա Փամբուխյանը:

Փոփոխության կարևոր պատճառներից են նաև Հայաստանին և Արցախին վերաբերող մի շարք հարցերում Ռուսաստանի գործողությունները (կամ անգործությունը)՝ որպես դաշնակից և ՀԱՊԿ անդամ, ինչը բերել է բնակչության մեջ Ռուսաստանի դերի վերանայմանը: Ընդ որում, պարտադիր չէ, որ վերանայումը արտահայտված լինի հողաբաշխ և վիճակագրորեն չափելի ձևերով:

«Ինձ համար կոնկրետ ռուս-ուկրաինական պատերազմի արձագանքներում լռությունն է շատ հետաքրքիր: Ծատ մարդիկ լռում են: Դա արդեն նշանակում է, որ մեծ տեղաշարժ է տեղի ունեցել: Ծատերն ավելի վստահորեն պրոռուսական կլինեին, եթե գոնե մի քիչ ավելի լեգիտիմ լիներ Ռուսաստանի հարձակումը, եթե մի քիչ կարճ տևեր, բայց հիմա արդեն մենք տեսնում ենք լռություն, ու այդ լռությունը իմ կարծիքով վերանայումների, հարցականների փուլ է»,- ասում է Սոնա Մանուսյանը:

Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականությանը զուգահեռ, որ զրուցակիցը «շանտաժ» է անվանում, ավելի «հուսահատ, կրկնվող, հայատյաց ու այդ առումով՝ քիչ համոզիչ» է դարձել նաև ռուսական պրոպագանդան: Այս ամենը հայաստանցիներից շատերին, մասնագետների դիտարկումներով, կարեկից են դարձրել Ուկրաինայի նկատմամբ, ստիպել «վերանայել նաև ուրիշ հարցերում Ռուսաստանի վարքը»:

«Մարդիկ սկսել են հասկանալ, որ Ռուսաստանը մեր հանդեպ էլ է վատ ու դրա միջոցով սկսել են ընդունել, որ կարող է վատ է անում նաև ուկրաինացու նկատմամբ, այսինքն մեր մաշկին է կպել՝ այդտեղից: Ու դա էլ հասկանալի է՝ ուկրաինացին էլ ադրբեջանցուն համակրում է, որովհետև ինչ-որ նմանեցում է տեսնում ու իր մաշկով այդպես է զգում»,- շարունակում է Սոնա Մանուսյանը:

Մեդիայի և հասարակության վերաբերմունքի փոփոխության գործում կարևոր գործոն կարող է լինել սեփական հակամարտության միջազգային լուսաբանման օրինակը:

«Արդյոք մենք, որպես հանրություն, այդ թվում՝ մեդիա հանրություն, [կարո՞ղ ենք] նույն պրիզմայով նայել Ուկրաինային: Ինձ թվում է, որ էս էթիկական խնդիրը բազմաթիվ դեպքերում օգնել է, որ անգամ ՀԱՊԿ-ով, Ռուսաստանի հետ հարաբերություններով, տարիների պրոպագանդայով, բոլոր ռուսական լրատվամիջոցներով հանդերձ հանրային ռեակցիան ավելի նորմալ է»,- ասում է Աննա Փամբուխյանը:

Հարցազրույցների որոշ մասնակիցներ նկատում են նաև, որ հետաքրքրության անկում է նկատվում թեմայի նկատմամբ, ինչպես հանրության շրջանում, այնպես էլ մեդիայում, որտեղ այն «արդեն քիչ բերող թեմա չէ»: Ուշադրության այս նվազումը կարող է պայմանավորված լինել ինչպես պատերազմի տևականությամբ, այնպես էլ

Հայաստանում նորանոր խնդիրների առաջացմամբ, «ներքաղաքական և արտաքին խնդիրների ու անվտանգության իրավիճակի արդյունքում երկարատև սթրեսի ու հոգնածության» հանգամանքով, այդ թվում՝ մեդիա աշխատողների շրջանում:

3. Լուսաբանման բարելավման առաջարկներ

Հարցազրույցների մասնակիցները նշել են մի շարք ձևեր, որոնցով կարելի է բարելավել ռուս-ուկրաինական պատերազմի տեղական լուսաբանումը: Նրանց մի մասի կարծիքով՝ այս հարցի լուսաբանումը պարզապես արտացոլում է այն բոլոր խնդիրները, որոնք եղել են հայաստանյան մեդիայում, օրինակ՝ շտապողականությունը, բևեռացվածությունը, փաստերի ստուգման պրակտիկայի բացակայությունը, բացահայտված կեղծիքները չհերքելը: Հետևաբար, առաջարկների մի մասը վերաբերել են մեդիայի գործունեության բարելավմանն ընդհանրապես:

Հիմնական առաջարկներից մեկը եղել է լրագրողական կրթությունը բարելավելը: Հարցված մասնագետների կարծիքով՝ լուսաբանման ներկա վիճակի պատճառներից է լրագրողների հմտությունների պակասը: Նրանք հատկապես կարևորում են լրագրողական կրթության վերակազմակերպումն այնպես, որ մեդիա կազմակերպություններում սկսեն աշխատել օտար լեզուներ իմացող և առանձին ոլորտի (օր.՝ արտաքին քաղաքականություն, համակարտություն) գիտելիքներ ունեցող մասնագետներ: Սա թույլ կտա մշակել համապատասխան տեղեկությունը, հաշվի առնել օտարերկրյա կամ միջազգային տեղեկատվամիջոցների ուղղվածությունները, ներառել աղբյուրների հնարավորինս մեծ բազմազանություն, խուսափել չճշտված և կողմնակալ տեղեկություններ վերահրապարակելուց: Ոմանք այս լուծումը ներկայացնում են պետության անելիքների կազմում:

Քանի որ բավարար ռեսուրսներ չունենալը քննարկվել է տարբեր հարցերի պատասխաններում, զրուցակիցների մի մասը առաջնահերթ լուծում են համարել \$ինանսական միջոցներ գտնելը: Դա կօգնի խմբագրություններում ունենալ միջազգային լրատվության մեջ մասնագիտացած լրագրողներ, ինչպես նաև փաստեր ստուգողներ: Լրատվամիջոցներին աջակցող կազմակերպությունները կարող են օգնել այս հարցում, եթե աջակցություն նախատեսեն նաև արտաքին քաղաքական հարցերի լուսաբանման համար: \$ինանսավորման ավելի ընդհանուր տարբերակը վերաբերում է պետական աջակցությանը, որը կօգնի ապահովել խմբագրությունների նյութական կայունությունը՝ պայմանով, որ աջակցությունը չի դառնա միջամտություն:

Ռեսուրսների ամկայության հետ է կապվում նաև Ուկրաինայում աշխատող թղթակիցներ չունենալը, ինչի լուծումն այս թեմայի ավելի լավ լուսաբանմանը հասնելու առաջարկներից մեկն է եղել:

«Ես հասկանում եմ, որ դա ռեսուրսների հետ կապված հարց է, բայց, այնուամենայնիվ, կարծում եմ, որ [լրատվամիջոցները] պետք է ձգտեն նրան, որ ունենան սեփական թղթակիցներ և իրենց տեսածը ներկայացնեն, փորձեն նաև

պարզել որոշակի իսկություն: Մենք երկրի ներսում ունենք հետաքննող լրագրողներ, բայց փաստորեն միջազգային ասպարեզում չունենք այնպիսի լրագրողներ, որ դրսի իրադարձության որևէ կոմպոնենտ հետաքննեն», - ասում է Էդգար Վարդանյանը:

ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանը խորհուրդ է տալիս միջոցների բացակայության դեպքում ներկայացնել այս հարցի կարևորությունը միջազգային դոնոր կազմակերպություններին և ստանալ աջակցություն: Բացի այդ, գուցե պետական օգնությամբ, անհրաժեշտ կլինի լուծել մեկ այլ տեխնիկական հարց՝ Լեհաստանի և Ռումինիայի միջոցով Ուկրաինա հասնելու վիզա ստանալը:

Պետական աջակցությունը, բացի կրթության և ֆինանսավորման հարցերում մասնակցությունից, կարող է լինել ինֆորմացիոն քաղաքականության հայեցակարգ մշակելու, մեդիա օրենսդրությունը բարեփոխելու, որակյալ լրագրության չափորոշիչներ մշակելու, ինչպես նաև մեդիագրագիտության, այդ թվում՝ փաստերի ստուգման ինստիտուտի զարգացման միջոցով: Այս առաջարկները, սակայն, վերաբերում են մեդիա դաշտին ընդհանրապես և այս հարցի բարելավման վրա անմիջական ազդեցություն չեն նշում:

Իսկ բովանդակության առնչությամբ զրուցակիցները մեդիայի ներկայացուցիչներին խորհուրդ են տալիս հրապարակելուց առաջ մշակել տեղեկությունները՝ լսարանի կողմնորոշմանն օգնելու համար: Սրա ձևերից մեկը հայտարարություններ վերահրապարակելու դեպքում նշելն է, որ դրանք ընդամենը տեսակետներ են և կարող են կողմնակալ լինել, ամբողջովին չարտացոլել իրականությունը, իսկ հակասություններ հայտնաբերելու դեպքում նշել դրանք և հավելել, որ հնարավոր չի եղել ճշտել, անկախ նրանից, թե որ կողմն է հեղինակել այն:

«Կանեն թե չէ՝ կարծում եմ, որ ոչ ոք էլ չի փոխի իր գործելակերպը, որովհետև վճարողները նույնն են, պահանջն է նույնը: Բայց, իհարկե, կարելի է անել և ավելի հարգալից վերաբերվել սեփական լսարանին», - ասում է Աշոտ Մելիքյանը:

Զրուցակիցներից մեկը կարևորել է «Ռուսաստանից և Եվրոպայից անկախ տարածաշրջանային կապերի ամրապնդումը», նաև՝ լրատվության մեջ: Սա կօգնի ավելի լավ հասկանալ տարածաշրջանի ժողովուրդների, այս պարագայում՝ ուկրաինացիների տեսակետը, և սեփական դիրքորոշումը ներկայացնելու ավելի լավ հնարավորություն ունենալ:

Մեկ այլ առաջարկի համաձայն, հետաքրքիր կլինի տեղական լրատվամիջոցներում լսել Զայաստան եկած ռուս, ուկրաինացի, բելառուս մարդկանց տեսակետները տարածաշրջանում կատարվող իրադարձությունների, նաև՝ իրենց փորձառությունների մասին:

Զրուցակիցներից երկուսը ուշադրություն են հրավիրել այն հանգամանքի վրա, որ Զայաստանում չկա ռուսագիտություն՝ որպես այնպիսի մի գիտակարգ, ինչպես արևելագիտության տարբեր ուղղություններն են: Այսինքն, Ռուսաստանը չի ուսումնասիրվում որպես քաղաքական սուբյեկտ, քննության չեն առնվում դրա

«քաղաքականության սկզբունքները, դրանց ծագման առանձնահատկությունները, պատմական անցյալում ու ներկայում դրա տրամաբանությունն ու փոփոխությունները, այս պատերազմով պայմանավորված տրանսֆորմացիաները»: Այսպես, թեմայի վերլուծություններին կարող է ավելանալ հետզադուֆային տեսակետը, որը կօգնի հաշվի առնել կայսրության մաս կազմած լինելն ու շարունակվող «գաղութային կախվածությունը»:

Վերջապես, պակասում է այնպիսի մի լուսաբանում, որը ավելի համարձակ է և ինքնուրույն, ունի խոսելու սեփական դիրք, ոչ թե ազդվում է արտաքին տեղեկատվական հոսքերից, դիրքավորվում և վերադիրքավորվում, համակրում կամ հակակրում՝ ըստ անհրաժեշտության:

«Չասկանում եմ մեր վտանգվածությունը, բայց միևնույն է՝ մեդիան կարող է մի քիչ ուրիշ դիսկուրս ձևավորել, որտեղ հայը իրեն նաև սեփական տեսակետի շուրջ մտածելու իրավունք ունեցող [զգա]», - ասում է Սոնա Մանուսյանը:

Օգտագործված նյութեր

ԵՄԱ (Երևանի մամուլի ակումբ) (2022), «Ուկրաինայի պատերազմի լուսաբանումը հայկական տեղեկատվական դաշտում», հասանելի է այստեղ՝ https://ypc.am/wp-content/uploads/2022/07/Monitoring_report_2022.am_.pdf (վերջին այցելությունը՝ դեկտեմբերի 18, 2022)

ՄՅԻ (Միջազգային հանրապետական ինստիտուտ) (2022) «Հասարակական կարծիքի ուսումնասիրություն, Հայաստանի բնակիչներ. Հունիս 2022». հասանելի է այստեղ՝ <https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2022/> (վերջին այցելությունը՝ դեկտեմբերի 18, 2022)

Ռեգիոն («Ռեգիոն» հետազոտական կենտրոն) (2022) «Բազմակարծությունը Հայաստանի մեդիայում. «ուրիշի խոսքի» ներկայացման առանձնահատկություններ». հասանելի է այստեղ՝ <https://www.regioncenter.info/hy/media-metrics/1910> (վերջին այցելությունը՝ դեկտեմբերի 18, 2022)

YPC (Yerevan Press Club) (2022) *“Russia’s war in Ukraine and its implications on skills needs and financial viability of independent media in the Eastern Partnership countries: Armenia”* (զեկույցի չիրապարակված տարբերակ)

Հավելված. Հարցազրույցների մասնակիցների ցանկը

(հարցազրույցների անցկացման ժամանակագրական կարգով)

Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Սամվել Մարտիրոսյան, մեդիա փորձագետ

Միքայել Չոլյան, քաղաքագետ

Աննա Փամբուխչյան, մեդիա փորձագետ, Եվրոպական ժողովրդավարացման հիմնադրամ

Էդգար Վարդանյան, քաղաքագետ, անկախ հետազոտող

Բորիս Նավասարդյան, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Սոնա Մանուկյան, հոգեբան, հետազոտող

Արտակ Խաչատրյան, մշակութային մարդաբան, Օրբելի վերլուծական-հետազոտական կենտրոնի փորձագետ